Այս ըսելով, աչքերը երկինք վերցուց, և իբրև Աստուծմէ լուսաւորեալ մարգարէ մը գոչեց. «Այս է ահա ամէն գաղտնեաց վերջին լուծումը, կենաց և մահու, երջանկութեան և թշուառութեան... ինծի ալ, Աստուծոյ բարկութէ գաւազանը ինծի ալ հասաւ. ես ալ լծակցէս և մէկ որդիէս զրկուեցայ։ Այս ցուրտ հողը նոյնպէս իմ սիրելեացս դիակունքն ալ ծածկեց։ Բայց սակայն գտայ ես իմ մխիթարութիւնս այն յաւիտենական գաղտնի բառին մէջ, է Աստուած»։ — Այն վայրկենէն զիս տագնապող յուսահատութեան ցնորքները անհետացան վրայէս։ Երախտագէտ սրտով համբուրեցի կնոջ ձեռքը՝ որ մը-խիթարութեանս և լուսաւորութեանս պատճառ եղաւ, և սիրտս յուսահատ ծերունւոյն դէմ զայրոյթ մը զգաց։ Դարձայ արհամարհանք ծերունւոյն անունը հարցուցի. պատասխան տուաւ ծերը. Ես Գիտուրիւն կը կոչուիմ։ Դարձայ կնոջ անունն ալ հարցուցի, և իմացայ թէ Հաւատք էր անոր անունը։ Յետոյ իւր վերարկուաւը ծածկեց զիս Հաւատքը, և անկէ վերջը յուսահատութէ խորհուրդները չմօտեցան ինծի այդ սուրբ վահանին հովանւոյն տակ։ Ուստի անկէ ետև հանգստութիւնը, երջանկութիւնը և խաղաղութիւնը իմ բաժինս եղան։

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Դուռնուզի հրեայ կանանց գիրուրիւնը։ — Տաճկաբնակ երկիրներու մէջ գիրութիւնը գեղեցկութեան անհրաժեշտ մասը կը սեպուի, և այն աղջիկները որ զանց կ'ընեն այս առանց որոյ ոչ պայմանս՝ շատ դժուարաւ կրնան էրիկ մը գտնալ։ Դունուզի Հրեայք ալ մըսլիմանաց սովորութիւններուն մեծ մասն ընդունած են, և թերևս գիրութէ կողմանէ իրենցմէ աւելի նախանձաւոր ըլլան։ Երբոր աղջիկ մը հարսնացու կ'ըլլայ, սովորութիւն է որ հարսնիքէն քառասուն օր առաջ կը գիրացնեն զինքը. թող չեն տար որ դուրս ելլէ, այլ կը փակեն մութ և ցուրտ սենեկի մը մէջ, շատ կը խմցընեն և երկայն ատեն կը քնացնեն. կէս գիշերուն մայրը կ'արթնցնէ զինքը և գոչագուռոռ ու մեղէն գնտակներ կը կերցնէ, որոնք շինուած են իւղային բուսոց հատիկներէ, նման Եւրոպա սագերուն կերածին։ Թէ որ քառասուն օրէն ետքը նշանուածը նիհար գտնէ զինքը, ծնողքը տասնուհինգ օր ալ կը շարունակեն նոյն ոճը, խեղճ աղջիկը մեռցնելու վտանգաւ։ Այս կերպով եղած գիրութիւնը չկորսուիր, կ'ըսեն Արաբացիք։

Կանայք սրունքնին և թևերնին ոսկիէ կամ արծաթէ մեծամեծ օղակներ կը կրեն. եթէ նշանուած օրիորդը այրի կամ ամուսնէն բաժնուած մարդու մը պիտի տրուի, իրեն կ'անցընեն առաջին կնկան օղակները և այնպէս կը բռնեն որ ապարանջաններուն մեծութիւնը լեցընելու չափ հաստընան թևերն ու սրունքները։ Դիւրին բան չէ այս գործողութիւնս, որովհետև շատ անգամ վըտիտ կին մը բոլորովին տարբեր կազմուած ունեցող կնկան կը յաջորդէ. կ'ըսուի ալ որ կնիկներէն ոմանք այս փափաքելի գիրութեան հասնելու համար շան լակոտներ կ'ուտեն, որ ամենաշաղուտ միջոց կը սեպուի. ուրիշները միայն սոսամն կ'ուտեն, քսանը չորս ժամուան վրայ քսանուիրեք ժամ կը քնանան, և ջանալով ջանալով՝ ամենէն աւելի ըմբոստ բնութեան ալ կը յաղթեն։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ